ՀԱՅԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 1912-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Առաջին համաշխարհային պատերազմ, հոգեբանության փոփոխություն, Արևմտյան Հայաստան, Հ. Յ. Դաշնակցություն, կամավորական շարժում, Ռուսաստան, Թուրքիա, գործոններ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1912 թվականին, երբ արդեն հասունանում է Առաջին համաշխարհային պատերազմը, մեծ տերությունների և մասնավորապես Ռուսաստանի կողմից հայության ե նրա քաղաքական ղեկավարության մեծամասնության մեջ վերստին սկսում է արմատավորվել այն համոզմունքը, որ քրիստոնյա Ռուսաստանը շուտով ազատագրելու է Արևմտյան Հայաստանը։ Հայության ու նրա ղեկավար ուժերի և մասնավորապես Հ.Յ. Դաշնակցության մեծամասնության հոգեբանության մեջ նորից տեղի է ունենում արմատական փոփոխություն։ Կրկին ձևավորուում է այն համոզմունքը, որը առավել մասսայական էր դարձել Ներսես Աշտարակեցու ժամանակներից և համաձայն որի՝ հայերը պետք է ունենան միայն մեկ՝ ռուսական կողմնորոշում։ Ընդ որում, անտեսվում էին հետևյալ կարևորագույն պատմական իրադարձությունները.

ա) Ռուսաստանի կողմից Արևելյան Հայաստանի վերջնականապես գրավումից հետո ի դերև էին ելել հայոց ինքնավարության բոլոր հույսերը, Հայկական մարզը ունեցել էր շատ կարճ, ընդամենը 12 տարվա կյանք (1928-1940թթ.) և Ռուսաստանը հայոց նկատմամբ վարում էր գաղութացման քաղաքականություն։

բ) Արևելյան Հայաստանի Ռուսաստանին կցումից հետո (1828թ. փետրվարի 18 - ի Թուրքմենչայի պայմանագրով), որին հաջորդեց 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմը և որն ավարտվեց գրավված Արևմտյան Հայաստանը կրկին Օսմանյան Թուրքիային վերադարձնելով, կտրուկ կերպով փոխվեց թուրքական իշխանությունների վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ։ Թուրքն արդեն հային սկսեց վե-

բաբերվել որպես կասկածելի տարրի, անուղղելի ռուսասերի, որը ձգտում է ռուսական տիրապետության։ Հայերի նկատմամբ նրա հալածանքները դարձան ավելի մասսայական, և աստիճանաբար սկսեց ձևավորվել և խորանալ քրդերին հայոց դեմ տրամադրելու քաղաքականությունը։

ՀԱՅԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Պատերազմի սկսումով կարծես մոռացվեցին այն հալածանքներն ու ճնշումները, որոնց ցարիզմը գնաց Հ.Յ. Դաշնակցության դեմ Ստոլիպինի կառավարության շրջանում (1906-1911թթ.)։ Նովոչերկասկի դատարանի դատական քննիչ Լիժինը կեղծ վկայությունների հիման վրա ստեղծեց 120 հատորից բաղկացած «Դաշնակցության գործը», որի հիման վրա ձերբակալվեցին դաշնակցական և մտավորական ակնառու շատ գործիչներ (Ավ. Ահարոնյան, Ավ. Սահակյան, Հ. Օհանջանյան, Ս. Մանասյան, Հ. Թումանյան և այլն)։

Ձերբակալվածների թիվը հասնում էր 160 հոգու։ Դաշնակցության դատավարության արդյունքում, որը տեղի ունեցավ 1911թ. վերջերին Պետերբուգում, աքսորի և բանտարկության դատապարտվեցին 52 հոգի, տաժանակրության՝ 4 հոգի (Համո Օհանջանյան, Սարգիս Մանասյան, Հովհաննես Ղազարյան, Արշակ Մուրատով)։

Այս ամենը վկայությունն է այն բանի, որ ցարիզմը երբեք էլ չի մտահոգվել արևմտահայության ազատագրության խնդրով և նրա՝ որպես հայոց փրկարարի ներկայացնելու կարգախոսները արհեստածին են, ներշնչված ռուսական վերին իշխանություններից, մեծ քաղաքականությունների մեջ հայությանն իր կողմը տրամադրելու ցանկութեամբ պայմանավորված։

Այսպես կոչված «ստոլիպինյան ռեակցիայի» շրջանում և տակավին դրանից առաջ էլ, երբ ցարը փորձեց բռնագրավել եկեղեցապատկան գույքը և փակել հայոց դպրոցները, հայոց հոգեբանության մէջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն։ Ամենուրեք սկսեց թևածել այն համոզմունքը, որ ռուսները ոչ միայն մեր ազատարարները չեն, այլ՝ ընդհակառակը ձգտում են ձուլել, նվազեցնել, ոչնչացնել հայ տարրը՝ նրա ազատագրական ձգտումներով, մշակութային և տնտեսական վերելքով պայմանավորված։ Հայոց հոգեբանության մեջ այս փոփոխությանը քիչ չնպաստեցին հայ-թաթարական կռիվները 1905-1906թթ., որոնց հիմնական ներշնչողը ցարիզմն էր, որը կովկասյան թաթար տարրի միջոցով ձգտում էր տկարացնել և ոչնչացնել արևելահայությանը։ Սակայն, հայության այս հոգեբանական վերափոխումը, դժբախտաբար շատ երկար չտևեց։ Եվ այս առումով վերստին Կովկասում սկսեց աշխատել ռուսական «մութ» ձեռքը։

1912թ. սկսած հայության հոգեբանության մեջ այդ «մութ» ձեռքը դանդաղ և հանգամանորէն կրկին արմատավորեց այն հանգամանքը, որ ինքը հայության ազատարարն է և այս անգամ վերջնականապես կգրավի Արևմտյան Հայաստանը: Եվ, դժբախտաբար, դեռ երեկ ռուսական բանտերում տառապողները արագորեն տարվեցին այս հույսով և հոգեբանությամբ:

Արդ, որոնք էին հայության հոգեբանության վրա կրկին հօգուտ իրենց ներգործելու ռուսական իշխանությունների պատճառները:

1912թ. սկսած Բալկանյան պատերազմները ցարի համար «սարսափելի» կուսակցության՝ Հ.Յ. Դաշնակցության նկատմամբ վերաբերմունքը անսպասելիորեն դարձրին փաղաքշական: Հ.Յ. Դաշնակցության դատավարության անակնկալ մեղմ ընթացք ձեռք բերելը և այնուհետև դատապարտվածների ազատ արձակումը, պայմանավորված էին Ռուսաստանի այն փորձված քաղաքականության վերստին կիրառելու անհրաժեշտությամբ, համաձայն որի՝ նա ընդդեմ Թուրքիայի իր դարավոր ձգտումները իրականացնելու համար խրախուսում էր նրա տիրապետության ներքո գտնվող քրիստոնյա ժողովրդների ազատագրական շարժումները: Հայության պարագայում այդ խրախուսանքները ընթանում էին քողարկված, դավադիր ձգտումների զուգորդությամբ: Քողածածկույթը աստիճանաբար մի կողմ քաշվեց, երբ վերջապես գրավվեց Արևմտյան Հայաստանը:

Երբ վերստին 1912-14թթ. կյանքի կոչվեց հայոց բարենորոգումների խնդիրը, հայոց հոգիներում ռուսական կողմնորոշման տեղատվության ամենամեծ նվիրյալը դարձավ նորընտիր կաթողիկոս Գևորգ Ե Տփխիսեցին: Վերջինս էր, որ ձևավորեց Հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ և ռուսական գաղտնի ներշնչումներով իր հոտի մեջ ընդհանրության հասցրեց այն գաղափարը, որ քրիստոնյա Ռուսաստանը շուտով ազատագրելու է Արևմտյան Հայաստանը: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի կաթողիկոսին ուղղված հետևյալ տողերը նրա սրտից մաքրում էին այս անգամ էլ խաբվելու կասկածի վերջին նշույլներն անգամ. «Այժմ կայսերական կառավարութիւնը առաջարկութիւն է արել Թուրքիոյ կառավարութեան, ցոյց տալով նրան, որ մեր ունեցած տեղեկութիւններով հայերի դրութիւնը Փոքր Ասիայում վերջին ժամանակները վատացել է եւ առաջ է բերում արդարացի գանգատներ քրդերի կողմից եղած հարստահարութիւնների եւ անձնական ու կալուածական ապահովութեան բացակայութեան վրայ, բաներ, որոնք առաջանում են վարչական անբարեկարգութիւնից եւ վատ կողմից: Դրա հետ միասին Թուրքիային ցոյց է տրուած, որ նրա համար անհրաժեշտ է այժմից իսկ լրջօրեն զբաղուեալ վերանորոգումներով Թիւրքաց Հայաստանում եւ լաւացնել վարչութեան կազմը, մատնանշելով, որ քրիստոնեայ

հպատակների օրինաւոր շահերի արհամարհումը եղել է մի շարք տարիների ընթացքում Թուրքիայի համար մշտական խռովութիւնների եւ բարդութիւնների աղբիւր նրա եւրոպական նահանգներում եւ վերջիվերջոյ բերել հասցրել է Թուրքիոյ համար դժբախտ պատերազմին Պալքաններում, նրա բոլոր հետեւանքներով:

Հետեւելով դարաւոր աւանդոյթներին եւ խորին զգացմունքով վերաբերուելով հայ ժողովրդի տանջանքներին, կայսերական կառավարութիւնը մտադիր է այսուհետեւ էլ անմենաբարեացակամ կերպով վերաբերուել Թուրքիայում կեղեքուող հայ ժողովրդի կարիքներին եւ ջանքեր գործադրել գոյութիւն ունեցող զեղծումները հեռացնելու նպատակով»:[1]

Բնական է, որ կեղծիքով լի այս խոսքերը դույզն իսկ կասկած չէին թողնելու կաթողիկոսի սրտում՝ հայոց բարենորոգումների ծրագրի կյանքի կոչելու հնարավորության տեսանկյունից: Ուստի և նա անզուգանանորեն հանդես եկավ հայոց հոգեբանության մեջ ռուսական կողմնորոշման վերստին արմատացման օգտին:

Մյուս մարմինը, որ կաթողիկոսից ոչ պակաս նպաստեց այդ հոգեբանության փոփոխությանը, նույն ցարիզմի կողմից կյանքի կոչված Ազգային Բյուրոն էր: Վերջինս բավական երկար պահեց և հայությանը ներշնչեց այն համոզմունքը, որ «Ռուսաստանը, որի հովանու տակ ենք գտնուում եւ որի շնորհիւ է ազատագրուելու հայ ազգը, թափում է իր հարազատների արյունը յանուն փոքր ազգերի ազատագրման»:[2]

Միայն ցավ ես զգում այն հանգամանքից, թե ինչպես էինք ազգովին հիմնավորապես խաբվում, մոռանալով դեռ երեկվա իրադարձությունները:

Անտեսվում էր նաև Լեոյի այն տեսակետը, ըստ որի «Ամբողջ մի դար է, որ ռուսները առաջացել են Արփաչայից մինչեը Ալաշկերտ, Եւրոպան չէր թողնում նրան առաջ շարժվել եւ հիմա էլ չի թողնի, քանի նրա դեմ կան հսկայական շահեր-Պաղտատի երկաթուղի, Միջագետք, Միջերկրական եւայլն»:[3]

Բոլորի բաղձանքը մեկն էր՝ «տեսնել թուրքահայ ժողովուրդը ազատուած տառապանքներից եւ ստեղծված ավտոնոմ մի կազմակերպութիւն»:[4] Եվ սա, անշուշտ, պետք է ստեղծեր ցարական Ռուսաստանը:

Իրականանում էր դեռևս 1909թ. Կ. Պոլսում Ս. Զավարյանի արած մարգարեությունը: Նա իր ըմբռնումների մեջ գրեթե մենակ էր, երբ հետև-

---

[1] **Գաբրիել Լազեան,** Հայաստան և Հայ դատը, հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 156:

[2] «Հորիզոն», թիվ 204, 17 սեպտեմբերի, Թիֆլիս, 1914:

[3] Նույն տեղում:

[4] **Ս. Վրացեան,** Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 123:

յալն էր ասում. «Ռուսական նպատակները չեն սահմանաւորուիր միայն Անդրկովկասը հլու հպատակ դարձնելով, այլեւ հարեւան պետութիւնները իր հակակշռին ենթարկելով, որպէսզի անոնք դրանք չյեղափոխուին եւ մնան յետամնաց, ինչպէս որ ինքն է: Ապացո՞յց կուզեք: Նայեցէք Մահմատ Ալի Շահի եւ գնդ. Լիախովի վրայ (վերջինս շահի հետ ճնշում էր պարսկական հեղափոխությունը – Ա. Ն.), նայեցեք Թաւրիզի կախաղանների վրա: **Լավ հասկացաք, երբ Անդրկովկասը մնա առանց Դաշնակցութեան հակակշռին, երբ մեզ համակիր գրողները, հասարակական դիրք ունեցողները, հաւատացեալ մարտիկները կը լքեն իրենց դիրքերը եւ այստեղ կ՛ապաստանին անոնք անգիտակցաբար ցարական նպատակներին կը ծառայեն: Անոնց տեղը պիտի բռնեն ցարի վարձկան գործակալները: Մեր հոգեւորականությինը, երգիչը պիտի դառնայ ցարական նպատակներուն: Մեր այնտեղի մամուլը փաստաբանը պիտի դառնայ ցարին: Մեր դպրոցները պիտի դառնան դաստիարակիչը ռուսական մեծութեան: Մեր մարտիկները պիտի դառնան անոր որսկան շները եւ մեր զանգուածը պիտի ծծուի սպունգի նման ռուսական հպատակներով: Եվ այդ ժամանակ՝ մնաս բարեաւ հայութեան շահերուն եվ նպատակներուն»:**[1] (Ընդգծումները մեր են – Ա. Ն.):

Հիրավի, 1912-14թթ. ամբողջ հայությունը ներծծվեց ռուսական նպատակներով և այդ նպատակները, դժբախտաբար, համահունչ էին դիտվում հայոց նպատակներին: Հայությունը հոգեկան տեղատվություն էր ապրում, քանզի հայոց կաթողիկոսը ցատկեց ռուս աշխարհակալների ուղարկած փրկության լաստի վրա՝ իր հետ տանելով և իր ժողովրդին: Չէր սխալվում մեծն մարգարեն, երբ շարունակում էր. «Ձեր Պատրիարքարանն ալ իր աշխատակիցներով, ոտքերը սոթտած, պիտի ուզենայ այդ լաստին հեծնել: Մէկ այլ լաստ անոնք պիտի ճամբեն «Մշակին», սոցիալ-դեմոկրատներին, մեր «ձախ» ըսուածներուն: Դրանց նշանները կերեւան արդեն Թիֆլիսի մէջ: Եւ մեր շարքերէն թեթեւամիտները պիտի թռնեն այդ լաստի վրայ: Իսկ անոնք, ով չգիտակցին այդ լաստերուն նենգությունը, մէկիկ-մէկիկ պիտի ընտրուին ու փչացուին: Եվ չգիտեմ, թէ անկէ վերջ ինչ պիտի դառնայ հայութեան ճակատագիրը: Գուցէ ան դադրի իսկ գոյութիւն ունենալէ»:[2]

Ինչպես համոզվում ենք, Ս. Զավարյանն ապշեցուցիչ ճշտությամբ կանխատեսում էր դեպքերը: Ոչ մեկը Ռուբենից լավ չի գրել. «Դեռեւս Սիմոնի հողաթումբին վրայ կանաչ չէր ելած եւ ոչ ալ ծաղիկներ բուսած, երբ անոր նախատեսութիւնները սկսան լրիւ իրականանալ: Անդրկովկասը պարպուած էր Դաշնակցութենէն: Դաշնակցութեան առաջնորդները բանտերու կամ աքսորներու մէջ էին, եւ զանոնք փոխարինողները էջմիածինը

[1] **Ռուբէն,** Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ(6), Լոս-Անճելըս, 1951, էջ 420:
[2] Նույն տեղում, էջ 420-421:

կամ Ռուսիոյ կամակատար Թիֆլիսի մտաւորականներն էին։ Ցարերու հպատակութեան նշան ակնակուռ խաչը ճակատին հայող կաթողիկոսը մէկ կողմէն կը յորդորէր իր հօտին ռուս բանակին մէջ մտնել եւ անոր զօրավիգ լինելով՝ «փրկել» Տաճկահայաստանը, իսկ միւս կողմէ՝ ան պատուիրակութիւն կը կազմէր՝ «Հոֆ և Վեստենենկ» ծրագրերը առաջ մղելու համար։

Պոլսոյ Պատրիարքարանն ու անոր կցուած հայ ղեկավարութիւնը կ՛երթային կաթողիկոսին ետեւէն եւ ամբողջ հայութիւնն արդէն կը հաւատար, թէ իր փրկութիւնը կու գայ Հիւսիսէն»։[1]

Ս. Զավարյանը բախտ ունեցավ այս բոլորը չտեսնելու, բայց կյանքից հեռացավ դրանք կանխատեսած մարդու խորին կսկիծով։

Հայոց հոգեբանության մեջ ռուսական տեղատվությունը արդեն ընդհանրության հասավ 1914թ. սկզբներից, երբ հունվարի 26-ին Ռուսաստանը Թուրքիային պարտադրեց բարենորոգումների իր ծրագիրը, որը Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելով հօդս ցնդեց։

Եթե ընդհանրացնենք, մինչև Առաջին Համաշխարհային պատերազմի սկիզբը հայոց մեծամասնության հոգեբանության մեջ հոգուտ ռուսական կողմնորոշման կտրուկ փոփոխության հիմնական գործոններն էին.

ա) Մերձավոր և Միջին Արևելքում ռուսական քաղաքականության վերստին ակտիվացումը, Թուրքիան անդամահատելու ռուսական ձգտումները, որոնք ավելի հեշտ իրագործելի կլինեին՝ հայերին որպես քրիստոնյա ժողովրդի վերստին շահելու, նրանց օգտագործելու ընդդեմ Թուրքիայի՝ բարենորոգումների ծրագրի (նույնիսկ ինքնավարության) հույսերի ներշնչումով։

բ) Նորանշանակ կաթողիկոսի, Ազգային Բյուրոյի, ռուսամետ մտավորականների միջոցով Կովկասի փոխարքայի այն խորամանկ ներշնչումներով, որ մոտ է հայության ազատագրման բաղձալի պահը և դրան ձգտում է ինքը՝ ցարը։

գ) Դաշնակցական այն գործիչների բանտարկմամբ կամ չեզոքացմամբ այն վտանգի նվազեցումով, որ գալիս էր նրանց կողմից ռուսական քաղաքականության երկդիմի էութայն բացահայտման տեսանկյունից։

Երբ դեռևս Թուրքիան Ռուսաստանի հետ պատերազի մեջ չէր մտել, արդեն գրեթե ողջ ռուսահայությունը ապրում էր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի կողմից շուտափույթ ազատագրված տեսնելու հոգեբանությամբ։ Այդ հոգեբանությունն այն աստիճանի էր արմատացել, որ արդեն մինչև պատերազմը ինքնաբուխ կերպով (անշուշտ, ռուսական գաղտ-

---

[1] **Սիմոն Զավարեան,** Մահուան յոթանասուն ամյակին առթիվ, Ա. հատոր, Պէյրութ, 1983, էջ 188, նաև՝ «Հայրենիք» ամսագիր, փետրվար, 1950։

նի ներշնչմամբ) արևելահայոց (նաև արևմտահայոց) մեջ սկզբնավորվեց կամավորական շարժումը՝ հոգուտ Ռուսաստանի և ընդդեմ Թուրքիայի։

Ոգևորությունն այն աստիճանի մեծ էր, որ ՀՅԴ - ն, ի վերջո, ստիպված եղավ խախտել Էրզրումում 1914թ. հուլիսին գումարված 8-րդ ընդհանուր ժողովի որոշումը՝ պատերազմի ժամանակ հայության չեզոքության մասին, ինչն ինքնին նշանակում էր հարաժարում կամավորական շարժումներից։[1]

Ականատեսը լինելով ամենուրեք ձևավորվող ինքնաբուխ և քաոսային կամավորական շարժումների, Դաշնակցությունն, ի վերջո, հանդես եկավ դրանց կազմակերպած բնույթ հաղորդելու դերով։ Արդյունքում 1914թ. աշնանը կազմակերպվեցին չորս կամավորական խմբեր։ Հարկավ, Դաշնակցության ղեկավար գործիչների մեջ էլ կային զինվորական և ղեկավար դեմքեր (Համազասպ, Անդրանիկ, Հ. Զավրիյան, Ռոստոմ և ուրիշներ), որոնք նույնպես միառժամանակ տարվեցին ռուսական ներշնչումներով։ Նրանց թվում էր, թէ մի քանի ամսից կազատարգվի Արևմտյան Հայաստանը։ Այս հավատն էր խոսում օսմանյան խորհրդարանի անդամ Արմեն Գարոյի մեջ, որը մի շարք ընկերների՝ նրան կամավորական շարժումից հեռու պահելու առաջարկներին պատասխանում էր. «Մի քանի ամսից մենք Կարին կը լինենք»։[2] Բայց հայտնի է, որ Արևմտյան Հայաստանը վերջնականապես գրավվեց, երբ զրկված էր իր բնիկ հայ տարրից։ Եվ հենց պատերազմի սկսումով **հօդս ցնդեց բարենորոգումների խնդիրը, և պատերազմի առաջին շրջանն ապացուցեց, որ արագորեն չի գրավելու Արևմտյան Հայաստանը**։ Եվ արդեն 1914թ. վերջերին հայոց հոգեբանության մեջ բեկում առաջացավ՝ ի վնաս ռուսական կողմնորոշման։

Այժմ մի փոքր հայոց հոգեբանության կրկին փոփոխության գործոնների մասին։

Ռուս-թուրքական պատերազմի սկսումով Արևմտյան Հայաստանի սահմաններին գտնվող ռուսական բանակը արագ անցնում է սահմանը և չորս ուղղություններով մտնում է սահմանամերձ գավառները։ Կենտրոնական թևը Կարաուրգանից առաջանում է դեպի Քեոփրիքոյ։ Երկրորդ, առաջինին օժանդակող թևը Ստահան գյուղից մտնում է Բասենի դաշտ և ուղղվում դարձեալ Քեոփրիքոյ։ Երրորդ թևը Արարատեան դաշտից շարժվում է դեպի Ալաշկերտի դաշտ և Հին Բայազետ։ Չորրորդ թևը մտնում է պարսկական Ատրպատական և շարժվում դեպի Վան։[3]

---

[1] Տես Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 1457, ց. 1, գ. 88։

[2] **Ս. Վրացեան,** Կեանքի ուղիներով, Գ. հատոր, Պէյրութ, 1963, էջ 37։

[3] **Կ. Սասունի**, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966, էջ 37-38։

Բնականաբար այս ուղղություններով հարձակման անցած ռուսական զորքերի հետ կռվում էին հայ կամավորական գնդերը։ Ռուսական հարձակումը, որը սկզբնական շրջանում բուռն ոգևորությունների տեղիք տվեց, երկար չտևեց, որով էլ սկզբնավորվեց հայոց մեջ խաբվածի հոգեբանությունը։ Ռուսները այս հարձակման հետևանքով հասան մինչև Հասանկալեի դռները, Ալաշկերտը գրավելով՝ մինչև Ղլիճ Կետուկ։ Ավելին անել, ինչպես նկատում է Կ. Սասունին, կնշանակեր գրավել Էրզրումն ու Տրապիզոնը, որը եղած ուժերով անհնար էր։ Թուրքերն իրենց ուժերն համախմբելով Էրզրումի ճակատի վրա, նախապատրաստվեցին հարձակման։ Ռուսներն իրենց ձեռքում էին պահում Բասենի մեծ մասը և Ալաշկերտի շրջանը։ Դրոյի գլխավորած երկրորդ կամավորական գունդը անցնում է դեպի Աբաղայի դաշտ, որից հետո «պատերազմի գիծը կայունութիւն մը ունեցաւ եւ մնաց Գավրէ-Շամէ-Ալատաղ, Խըլըճ-Գետիկ-Դանակերմազ, Դալի-Բաբա-Գարաուրկան»։[1]

Դիպուկ է գրել Կ. Սասունին. «Առ այժմ այսքան էր Թրքահայաստանը»։[2]

Երբ գրավյալ տարածքներ մեկնած հայ ղեկավար գործիչները զբաղված էին հայրենաշեն աշխատանքներով, սկսվեց ռուսական առաջին նահանջը (1914թ. դեկտեմբեր)։ Թուրքական հարձակման հետևանքով՝ «Կովկասեան բեմը Բասէնէն կը փոխադրուէր զինուորական բնական կարգով Ախալքալաք-Լոռի-Գանձակ-Ղարաբաղ, այսինքն՝ Փոքր Կովկասեան լեռնաշղթային վրայ»։[3]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսական առաջին նահանջը հայության վրա անդրադարձավ երեք բացասական կողմերով.

Առաջին. Խախտեց գրավեալ տարածքների բնակչության այն համոզմունքը, որ ռուսների կողմից վերջնականապես ազատված են թուրքական տիրապետությունից և այլևս տեր են իրենց հայրենիքին։ Նրանց էության ու հոգեբանության մեջ ներարկվեց վախը, որ իրոք անապահով են և ցանկացած պահի կարող է կրկնվել նույնը։ Խախտվեց նաև հավատը քրիստոնյա ազատարարի նկատմամբ։

Երկրորդ. հայ քաղաքական ղեկավարների վրա ծանրացավ ևս մեկ հոգս՝ գաղթականության հոգսը։ Այս նույն հոգսը չունենալու համար ռու-

---

[1] Նույն տեղում, էջ 40։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 51։

սը շատ չանցած որդեգրեց մի քաղաքականություն, որն էր՝ Արևմտյան Հայաստանը գրավել այն ժամանակ, երբ վերջնականապես կոչնչանա թուրքերի կողմից:

Երրորդ. փոխվեց վերաբերմունքը կամավորական շարժման նկատմամբ, սառեց նախկին ոգևորությունը, քանզի դրանով մի ավելորդ առիթ էր տրվում թուրքերին իրենց ջարդերի վաղօրոք ծրագրած քաղաքականությունն իրականացնելու համար:

Այսպիսով, արդեն 1914թ. վերջերին կրկին բեկում սկսվեց հայության հոգեբանության մեջ ի վնաս ռուսական կողմնորոշման, քանզի սկսեց պարզ դառնալ այն ճշմարտությունը, որ ռուսներից վերստին խաբված են, ճշմարտություն, որն ավելի արմատավորվեց 1915թ. մեծ ցեղասպանության օրերին, որի մասին տեղյակ լինելով իրենց հետախույզներից, ռուսները ոչ մի փրկարարի քայլ չկատարեցին, ստիպելով մեկ անգամ ևս ճաշակել իրենց քաղաքականության խաբկանքը:

Ашот Нерсисян, Факторы изменения психологии армян в 1912-1914 гг. - С началом Первой мировой войны среди армянских политических лидеров вновь укореняется вера в то, что западные армяне будут освобождены русскими, несмотря на горький опыт. Но вскоре после начала войны это убеждение было нарушено. В конце 1914 г. начавшийся прорыв в вестернизации происходит в ущерб русской ориентации. Была поколеблена убежденность населения оккупированных территорий в том, что они окончательно освобождены от турецкого владычества русскими и что они являются хозяевами своей родины. то же самое может повториться в любой момент. Была нарушена и вера в христианского освободителя. Армянских политических лидеров тяготила еще одна тревога – тревога эмиграции. Чтобы не иметь такого же беспокойства, русские вскоре приняли политику, которая заключалась в том, чтобы оккупировать Западную Армению, когда она была окончательно разрушена турками. Изменилось отношение к добровольческому движению, остыл прежний энтузиазм, ибо это дало туркам дополнительную возможность осуществить заранее спланированную политику погромов. В конце 1914 г. в психологии армян вновь начался прорыв в ущерб русской ориентации, так как правда выяснилось, что они были вновь обмануты русскими, которые еще больше окопались в 1915 г., в дни геноцида, о котором русские, узнав от своих шпионов, не предприняли никаких спасательных шагов, заставив их в очередной раз вкусить обман своей политики.

Ashot Nersisyan, Factors of change in the psychology of Armenians in 1912-1914. - With the beginning of the First World War, the belief that Western Armenians will be liberated by the Russians takes root again among Armenian political leaders, despite the bitter experience. But not long after the start of the war, that belief was violated. At the end of 1914, a breakthrough began in westernization occurs to the detriment of the Russian orientation. The conviction of the population of the occupied territories, that they were finally freed from the Turkish rule by the Russians and that they were the owners of their homeland was shattered.The fear was injected into their nature and psychology that they are really insecure and the same thing can happen again at any moment. Faith in the Christian liberator was also violated. Armenian political leaders were burdened by another worry, the worry of emigration. In order not to have the same concern, the Russians soon adopted a policy, which was to occupy Western Armenia when it was finally destroyed by the Turks. The attitude towards the volunteer movement changed, the former enthusiasm cooled down, because it gave the Turks an extra opportunity to implement their preplanned policy of pogroms. At the end of 1914, a breakthrough began again in the psychology of the Armenians to the detriment of the Russian orientation, as the truth became clear that they were deceived again by the Russians, which became more entrenched in 1915, during the days of the genocide, about which the Russians, being informed by their spies, did not take any rescue steps, forcing them to taste the deception of their policy once again.

Ուղարկվել է խմբագրություն 15.06.2022թ.
Գրախոսվել է 27.06.2022թ.
Ստորագրվել է տպագրության 29.06.2022թ.